

Հարգելի՛ հայրենակիցներ,

Մասիս խոշորացված համայնքի սիրելի՛ բնակիչներ,

Ավարտվում է մեր երկրի ու ժողովրդի համար ցավի ու կորստի, հուսալքության ու անվստահության, տառապանքներով ու փորձություններով լի ևս մեկ տարի:

Եվս մեկ տարի հայ ժողովուրդն ապրեց պատերազմի վտանգը սրտում, ապրեց՝ զգալով պարտության դառնությունը, ապրեց՝ սգալով բազմաթիվ հայորդիների մահը:

Այսօր, առավել, քան երբևէ, մենք պետք է ուժեղ ու հաստատակամ լինենք: Մենք չենք կարող հաշտվել կորուստների հետ: Մենք երբեք չպետք է մոռանանք, որ պարտավոր ենք նահատակված հազարավոր հայորդիների և գալիք սերունդների առջև: Մենք պետք է հավատանք ու պայքարենք մեր երկրի վաղվա օրվա համար: Մենք պետք է հավատանք, որ բազմաթիվ փորձություններ հաղթահարած հայ ժողովուրդը կրկին հաղթանակներ է տոնելու:

Սիրելի՛ մասիսցիներ,

Մեր երկրում և Արցախում ստեղծված իրավիճակը, բնականաբար, իր ազդեցությունը թողեց նաև համայնքային գործունեության վրա:

Այդուհանդերձ, հաղթահարելով խոչընդոտները և չերկնչելով դժվարությունների առջև՝ 2022 թվականի ընթացքում Մասիս խոշորացված համայնքում իրականացվեցին բազմաթիվ ծրագրեր, որոնք միտված են մեր համայնքի զարգացմանն ու հզորացմանը: 2023 թվականի համար նույնպես նախատեսել ենք համայնքային կարևորության մի շարք ծրագրեր, որոնց առանցքում համայնքի համար առաջնային համարվող խնդիրներն են:

Սիրելի՛ հայրենակիցներ,

Ամանորի նախաշեմին առաձնահատուկ շնորհավորում եմ հայ զինվորին, ում շնորհիվ անառիկ են մեր երկրի սահմանները:

Համբերություն ու տոկունություն են մաղթում այն ընտանիքներին, որոնց գավակներն անմահացան Արցախյան պատերազմներում:

Մաղթում եմ, որ խաղաղություն ու բարեկեցություն լինի յուրաքանչյուր հայ օջախում: Թող 2023 թվականը լինի հույսի ու հավատի վերականգնման, միասնականության ու հաղթանակների տարի:

Շնորհավո՛ր Ամանոր և Մուրք ծնունդ: